

## Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկ

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1 + APY)^{(D_n/365)}}$$

որտեղ՝

1. A - ավանդի սկզբնական գումարն է:
2. n - ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարն է:
3. N - ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված:
4.  $K_n$  - ավանդի ներդրման պահին եւ/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի եւ/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքեր:
5.  $D_n$  - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական՝ n-րդ դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը,  $D_1 = 0$ :